Ը.00.02 – ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ընդհանուր մասնագիտական կրթամաս (75 հարց)

1. Արտադրության հավասարակշիռ ծավալը «ամբողջական ծախսումներ» մոդելում /ծախսեր-եկամուտ, արտահոսք-ներհոսք եղանակներ/: Հավասարակշիռ ՀՆԱ-ն լրիվ զբաղվածության պայմաններում, անկման և գնաճի խզումները:
2. Պահանջարկի և առաջարկի գնային առաձգականությունները, դրանց գործոնները: Պահանաջարկի խաչաձև և եկամտային առաձգականությունները:
3. Արտադրության ծախքերը. արտաքին /հաշվապահական/ և ներքին /այլընտրանքային/ ծախքեր: Տնտեսական շահույթը և դրա աղբյուրները:
4. Կատարյալ և ոչ կատարյալ մրցակցություն. շուկայական չորս հիմնական մոդելները և արդյունավտության համեմատական վերլուծությունն այդ մոդելներում:
5. Ռեսուրսների պահանջարկի բնույթը, գործոնները և առաձգականությունը: Ռեսուրսների օպտիմալ հարաբերակցությունը /նվազագույն ծախքի և շահույթի մաքսիմալացման կանոնները/:
6. Աշխատանքը և աշխատավարձը, հավասարակշռությունը աշխատանքի շուկայում, առանձնահատկությունները:
7. Կապիտալի բնորոշումը. ֆիզիկական և փողային կապիտալ: Տոկոսադրույքը և դրա մեծությունը որոշող գործոնները:
8. Տնտեսական ռենտան, հողային ռենտան որպես ավելցուկ: Հողի գինը:
9. ՀՆԱ-ի հաշվարկման եղանակները, իրական և անվանական ՀՆԱ: ՀՆԱ-ն և բնակչության բարեկեցությունը:
10. Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան և դրա էվոլյուցիան: Տնտեսագիտությունը որպես ընտրության, արդյունավետության և խնայողության գիտություն:
11. Հավասարակշռության հաստատման և պահպանման լուսաբանումը «AD-AS» մոդելում:
12. Արժողության /գին, արժեք, փոխանակային արժեք/ և շահույթի /զուտ արդյունք, հավելյալ արդյունք, հավելյալ արժեք և այլն/ տեսությունների էվոլյուցիան:
13. Դասական հայեցակարգի հիմնարար սկզբունքները և դրանց քննադատական մեկնաբանությունները պատմական, ինստիտուցիոնալ և քեյնսյան ուղղությունների կողմից:
14. Սմիթի, Մարքսի և Քեյնսի տնտեսագիտական մոդելները և դրանց համեմատական վերլուծությունը:

15. Գործազրկության և գնաճի կապը՝ Ֆիլիպսի կորը, կարճատև /ստագֆլյացիա/ և երկարատև /մոնետարիզմ, ռացիոնալ և ադապտիվ սպասումների տեսություններ/ ժամանակահատվածներում:
16. Արդյունաբերական սեփականություն (ԱՍ) և մտավոր սեփականության (ՄՍ) օբյեկտները:
17. Գյուտին արտոնագիր տալու պայմանները, ապրանքային և սպասարկման նշաններ, արդյունաբերական նմուշներ:
18. Մարքեթինգային ռազմավարության մշակման գործընթացը:
19. Մարքեթինգային հետազոտությունների հիմնական ուղղությունները և մեթոդները:
20. Գովազդային արշավների կազմակերպում:
21. Կազմակերպության դրամական հոսքերի գնահատում:
22. Ֆինանսական հաշվետվության վերլուծություն:
23. Կազմակերպության ֆինանսների կառավարման համակարգը և խնդիրները:
24. Պատվերի օպտիմալ խմբաքանակի մեծության որոշումը:
25. Պաշարների կառավարման հիմնական համակարգերի համեմատական վերլուծությունը:
26. Ռիսկի կառուցվածքային բնութագրերը:
27. Կազմակերպության արտաքին միջավայրի վերլուծությունը: Կազմակերպության արտաքին անուղղակի ազդեցության ոլորտները /PETSEL վերլուծություն/ և ուղղակի ազդեցության ոլորտները /Մ. Պորտերի մրցակցային ուժերի վերլուծություն/:
28. Կազմակերպության ռազմավարության վերլուծության և ընտրության գործընթացը: Ռազմավարության վերլուծության գործիքները /SWOT, BCG, SPACE/:
29. Շուկայի բացերը և կարգավորման ուղղությունները /մրցակցության սահմանափակումներ, տեղեկատվության անհամաչափություն, հանրային բարիքների արտադրություն, արտաքին էֆեկտները և դրանց տեսակները/:
30. Աղքատությունը և դրա նվազեցման ուղղությունները ՀՀ-ում /աղքատության հասկացությունը, սահմանումները, գնահատումը, գնահատման մեթոդաբանությունը, հիմնական ցուցանիշները/:
31. ՀՀ ֆինանսական համակարգը, կառուցվածքը և հիմնական գործառույթները:
32. Ֆինանսական շուկաները և ֆինանսական միջնորդները, հիմնական գործառույթները:
33. Ֆինանսական վերլուծության հիմնական մեթոդները:
34. Հարկերի էությունը, դասակարգումը և հարկման մեթոդները:
35. Հարկաբյուջետային քաղաքականություն, կազման և վերահսկողության հիմնական մեխանիզմներ:
36. Առևտրային բանկի դերը շուկայական տնտեսության մեջ և հիմնական գործառույթները:
37. Դրամավարկային քաղաքականություն, ծրագիրը, նպատակը և խնդիրները:
38. Արժեթղթերի էությունը, դասակարգումը, տեսակները և կիրառման ժամանակակից ուղղությունները:

39. Ապահովագրության էությունը և դերը տնտեսության մեջ։
40. Կապիտալ բյուջետավորման մեթոդները։
41. Հաշվապահական հաշվառման տարրերը, դրանց սահմանումը և դասակարգումը։
42. Ֆինանսական հաշվետվության ձևերն ու դրանց փոխադարձ կապը։
43. Կապիտալի կառուցվածք և արժեք, գնահատման հիմնական մեթոդները։
44. Պորտֆելային ռիսկ և եկամուտ, գնահատման մեթոդները։
45. Կազմակերպության ֆինանսական պլանավորումը։
46. Ռեսուրսների համամասնության Հեկշեր-Օհլինի թեորեմը և համաշխարհային շուկայում գործոնների գների հավասարեցումը։
47. Եկամուտների բաշխման վրա արտաքին առևտրի ազդեցության Ստոլպեր-Սամուելսոնի թեորեմը։
48. Արտաքին առևտրի վրա տնտեսական աճի ազդեցության Ռիբչինսկու թեորեմը։
49. Ռեսուրսների համամասնության թեորեմի ստուգումը. Լեոնտևի պարադոքսը և դրա մեկնաբանությունները։
50. Մրցակցային առավելությունների Պորտերի տեսությունը։
51. Արտաքին առևտրի հավասարակշռությունը, մեկնաբանությունը Էջվորդի արկղի միջոցով։
52. Ազատ առևտուր, հովանավորչություն, դեմպինգ։
53. Առևտրային հաշվեկշիռը և դրա կառուցվածքը։
54. Վճարային հաշվեկշռի կառուցվածքը և կարգավորման եղանակները։
55. Արտաքին առևտրի տարիֆային կարգավորման եղանակները։
56. Արտաքին առևտրի ոչ տարիֆային կարգավորման եղանակները։
57. Աշխատուժի միջազգային միգրացիան և դրա արդյունավետությունը։
58. Միջազգային արժութային համակարգի զարգացման հիմնական փուլերը։
59. Արժութային փոխարժեքը և դրա տեսակները։
60. Գլոբալ տնտեսական հիմնախնդիրների դրսևորումները։
61. Սպառողի վարքի մոդելը։ Սարդոստայնային մոդելը։ Նվազագույն ծախսերով արտադրության գծային մոդելը։
62. Հավասարակշռության գոյությունը օգտակարության մաքսիմալացման խնդրում։ Պահանջարկի ֆունկցիաներ։ Անուղղակի օգտակարության ֆունկցիան և հատկությունները։
63. Ծախսերի մինիմալացման խնդիրը։ Ծախսերի ֆունկցիան և հատկությունները։ Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խնդիրների միջև կապը։
64. Ձեռնարկության կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացումը։ Երկակիությունը արտադրությունում։ Մրցակցային ձեռնարկության շահույթի մաքսիմալացումը։
65. Տնտեսական զարգացման դինամիկ մոդելներ։ «Կապիտալ-ներդրումներ-արդյունք» մոդելը։ Տնտեսական աճի Ուզավայի մոդելը։
66. Ընդհանուր հավասարակշռության գոյությունը։ Հավասարակշռություն և լավագույն լուծում։

67. Դրամավարկային, հարկաբյուջետային և առևտրային քաղաքականությունները Մանդել-Ֆլեմինգի մոդելում լողացող և հաստատագրված փոխանակային կուրսերի դեպքում:
68. Պաշարների կառավարման հիմնական մոդելները: Պաշարների կառավարման մոդելների դասակարգումը: Պաշարների կառավարման հիմնական մոդելը:
69. Պետական պարտքի դինամիկ ֆունկցիան: Պետության վճարունակությունը:
70. Օպտիմալ կառավարման մոդելը, մաքսիմումի սկզբունքը:Օպտիմալ կառավարման մոդելը: Օպտիմալ տնտեսական աճի նեոդասական մոդելը:
71. Երկակիության տեսության հիմնական թեորեմները և դրանց տնտեսագիտական մեկնաբանությունը:
72. Երկմատիրցային խաղեր: Խաղերի տեսության հավասարակշռությա սկզբունքները:Գովազդային խաղը, որպես լուսաբանող օրինակ:
73. Գծային ռեգրեսիա: Պարամետրերի գնահատման փոքրագույն քառակուսիների եղանակը: Գծայնացվող մոդելներ:
74. Ժամանակային շարքեր. ստացիոնարություն, թվային բնութագրիչները: Կորելոգրամ: Սպիտակ աղմուկ պրոցեսը:
75. Ավտոռեգրեսիոն սահող միջիններով մոդելներ ARMA(p,q):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Макконнелл К. Р., Брю С. Л., Флинн Ш. М., Экономикс, Принципы, проблемы и политика. Учебник, 18-ое издание, перевод с английского, Москва, 2011, 1009 с.
2. Курс экономической теории: Учебное пособие для студентов вузов, под редакцией А. В. Сидоровича, 3-е издание, Москва, 2007, 1035 с.
3. Котлер Ф., Маркетинг-менеджмент, Экспресс – курс, 2 издание, Москва, 2006, 814 с.
4. Брейли Р., Майерс С., Принципы корпоративных финансов, Москва, 2012, 967 с.
5. Մնացականյան Հ. Գ., Հակոբյան Ա. Զ., Ֆինանսներ և ֆինանսական համակարգ, Երևան, 2005, 88 էջ:
6. Թորոսյան Թ. Շ., Միջազգային տնտեսագիտություն. առևտուր և ֆինանսներ, երկրորդ հրատարակություն, Երևան, 2005, 382 էջ
7. Carbaugh R., International Economics, 15 th edition, Boston, USA, 2014, 554 p.
8. Магнус Л. Р., Катышев П. К., Эконометрика, Москва, 2001, 400 с.
9. Тарасевич Л. С., Гребенников П. И., Леусский А. И., Москва, 2003, 686 с.
10. Вариан Х., Микроэкономика, Промежуточный уровень. Современный подход, Москва, 1997, 767 с.
11. Տնտեսական իրավիճակների մոդելավորում, Խմբագիրներ Հ. Լ. Սարգսյան, Ա. Հ. Առաքելյան, Երևան, 2009, 174 էջ:

Օժանդակ

1. Աղաջանյան Հ. Ի., Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, մաս 1, Երևան, 2009, 472 էջ:
2. Աղաջանյան Հ. Ի., Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, մաս 2, Երևան, 2015, 484 էջ:
3. Пиндайк Р. С., Рабинфельд Д. Л., Микроэкономика, 5-ое изд., Санкт Петербург, 2002, 608 с.

4. Менькю Н. Г., Принципы микроэкономики, 2-ое изд., Санкт Петербург, 2003, 560с.
5. Ղանթարջյան Ս. Լ., Արտադրական մենեջմենթի մեթոդները և մոդելները, Ուս. ձեռնարկ, Երևան, 2009, 133 էջ:
6. Рыхтикова Н. А., Анализ и управление рисками организации: Учебное пособие, Москва, 2012, 239 с.
7. Lasher W., Practical Financial Management, South-Wester, 2011, 767 p.
8. Զուրաբյան Կ. Ա., Միրզախանյան Ք. Զ. Հաշվապահական հաշվառում, ուս. ձեռնարկ, Երևան, 2012, 173 էջ:
9. Բանկային գործ, գլխ. խմբագիր Բ. Ա. Ասատրյան, Երևան, 2013, 687 էջ:
10. О. В. Молчанова, Таможенное дело, М 2005
11. Թորոսյան Թ. Շ., Միջազգային տնտեսագիտություն, երրորդ հրատարակություն, Երևան, 2009, 207 էջ:
12. Фаминский И. П., Международные экономические отношения. 2-е издание, Москва, 2004, 847 с.
13. Husted S., Melvin M., International Economics, 9 th edition, USA, 2012, 424 p.
14. Бурда М., Виплош Ч., Макроэкономика, Санкт-Петербург, 1997, 829 с.
15. Мэнкью Н. Г., Макроэкономика. пер. с англ., Москва, 1994, 736 с.
16. Сакс Дж., Ларрен Ф., Макроэкономика. Глобальный подход, Москва, 1996, 848 с.
17. Доугерти К., Эконометрика, Санкт Петербург, 2009, 465 с.

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ (25 ՀԱՐՑ)

1. Վերահսկումը կառավարման գործընթացում:
2. Կառավարչական որոշումները կազմակերպության ռազմավարական պլանավորման գործընթացում:
3. Ռազմավարության իրականացումը:
4. Համեմատական մենեջմենթ:
5. Նոր ապրանքի մշակման գործընթացի հիմնական փուլերը և նրանցում առաջացող հիմնական դժվարությունները:
6. Վենչուրային մարքեթինգի զարգացման հիմնական փուլերը: Մարքեթինգի դերը վենչուրային նախագծերում:
7. Կարճաժամկետ ֆինանսական պլանավորում և ֆինանսավորում:
8. Կազմակերպության ֆինանսական վերլուծության ժամանակակից մեթոդները:
9. Լիդերության տեսությունների համեմատական վերլուծությունը:
10. Կազմակերպական վարքի հիմնական ուղղությունները:
11. Մոտիվացման հիմնական և ժամանակակից հայեցակարգերը:
12. Թիմեր, թիմային գործընթացներ:
13. Լոգիստիկայի զարգացման հայեցակարգային գործոնները: LP (Lean Production)-ճկուն արտադրության կազմակերպման հայեցակարգը: 7R կանոնը:
14. «Արտադրել կամ գնել» (MOB) հիմնախնդրի էությունը և լուծման առանձնահատկությունները:
15. Նոր արտադրանքի ներդրման մեթոդների համեմատական վերլուծությունը:
16. Ռազմավարությունների իրականացման օպտիմալ սահմանների որոշումը ռիսկային պայմաններում:

17. Ռիսկային երևույթների դասակարգումն ըստ ռիսկի մեծության բնութագրերի:
18. Ինովացիաներ, դրանց տեսակները, ինովացիոն գործընթացի հիմնական փուլերը:
19. Աշխատանքային ռեսուրսների ձևավորումը, բաշխումը:
20. Հարկերի և սոցիալական օժանդակության ծրագրերի ազդեցությունն աշխատանքի առաջարկի վրա:
21. Պետության ազդեցությունն աշխատանքի շուկայի վրա:
22. Աշխատանքի վարձատրությունը և խթանումը:
23. Որակի կառավարման արդի խնդիրները և առանձնահատկությունները:
24. Ձեռնարկության հիմնական և շրջանառու միջոցները:
25. Ծառայության ոլորտ. նշանակությունը, կառուցվածքը, գործունեության նշանակությունը: Սոցիալական ոլորտը որպես ծառայության ոլորտի ենթահամակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնական

1. Основы инновационного менеджмента.Теория и практика, под ред. А. К. Казанцева, Л. Э. Миндеди, Москва, 2004, 508 с.
2. Дафт Р. Л., Менеджмент, Санкт Петербург, 2012, 799 с.

Օժանդակ

1. Котлер Ф., Маркетинг-менеджмент, Экспресс – курс, 2 издание, Москва, 2006, 814 с.
2. Համբարձումյան Ա.Հ., Մարդկային ռեսուրսներ և աշխատանքի էկոնոմիկա, Երևան, 2011, 232 էջ:
3. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Менеджмент, Москва, 2007, 672 с.